

4

ՆՈՅԵՄԲԵՐ
2025

Luys Lnyu®



Generis
PUBLISHING

**WHY DO SOME SELF-DETERMINATION CONFLICTS END
IN SECESSION, WHILE OTHERS END IN GENOCIDE?**

CASE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT

ԻՆՉՈ՞Ւ ՈՐՈՇ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԱՐՏՎՈՒՄ ԵՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՄԲ, ԻՍԿ
ՄՅՈՒՍՆԵՐԸ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ.
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԺԸ

ԻՆՉՈՒՆՈՐՈՇ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԱՐՏՎՈՒՄ ԵՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՄԲ, ԻՍԿ ՄՅՈՒՍՆԵՐԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ



«Generis Publishing» հրատարակչությունը հրատարակել է քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Թորոսյանի «Why do Some Self-determination Conflicts End in Secession, while Others End in Genocide? Case of the Nagorno-Karabakh conflict» («Ինչո՞ւ որոշ ինքնորոշման հակամարտություններ ավարտվում են անկախության միջազգային ճանաչմամբ, իսկ մյուսները՝ ցեղասպանությամբ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքը») մենագրությունը: Այն հասանելի է հրատարակչության կայքում և Amazon, Libroterra, Bookfinder էլեկտրոնային գրախանութներում: Ստորև, հրատարակչության համաձայնությամբ, հրապարակվում են մենագրության նախաբանն ու եզրակացությունը:

ՆԱԽԱԲԱՆ

Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորումը միջազգային հարաբերությունների ամենաբարդ խնդիրներից մեկն է, քանի որ այն սերտորեն կապված է տարածքային հարցերի հետ, որոնք դարեր շարունակ հաճախ հանգեցրել են երկրների և ժողովուրդների միջև արյունահեղության, էթնիկ զտումների և ցեղասպանության: Այդ առումով, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծումը 1948 թվականին հեղափոխական նշանակություն ունեցավ նոր մակարդակի միջազգային հարաբերությունների ձևավորման համար՝ հիմնված որոշակի սկզբունքների և մեխանիզմների վրա: Դա թույլ է տվել իրավական նորմեր ու գործիքներ մշակել միջազգային հարաբերություններում առկա խնդիրների լուծման համար, մասնավորապես, ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման և ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների ձևավորման միջոցով էթնոքաղաքական հակամարտությունների լուծման համար: Հատկանշական է, որ ՄԱԿ-ի

կանոնադրության 1-ին հոդվածը (Charter of the United Nations. <https://treaties.un.org/doc/publication/ctc/uncharter.pdf>) սահմանում է, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգումն անհրաժեշտ պայման է կազմակերպության գլխավոր նպատակների իրականացման համար՝ ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների, խաղաղության և անվտանգության հասնելու համար:

Միջազգային իրավունքի նորմերը թույլ են տալիս էթնոքաղաքական հակամարտությունները դասակարգել երկու տեսակի՝

- միջազգային իրավունքի հիման վրա անկախության օրինական (լեգիտիմ) հռչակումից հետո ծագող հակամարտություններ (ինքնորոշման հակամարտություններ),
- հակամարտություններ, որոնք առաջանում են միջազգային իրավունքի խախտումով անկախության հռչակումից հետո (Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo. 22 July. <https://www.icjci.org/sites/default/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>, par 81):

1970-ին «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի» ընդունումը ([https://undocs.org/en/A/RES/2625\(XXV\)](https://undocs.org/en/A/RES/2625(XXV))), Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի» (Covenant 1966 International Covenant on Civil and Political Rights, https://treaties.un.org/doc/Treaties/1976/03/1976032306-17AM/Ch_IV_04.pdf) հետ, ապահովեց մանրամասն և համապարփակ իրավական հիմք՝ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման համար: Սակայն որոշ դեպքերում այդ հակամարտություններն ավարտվում են մետրոպոլիայից օրինական անջատմամբ (սեցեսիա) և ինքնորոշված կողմի անկախության միջազգային ճանաչմամբ (ՄԱԿ-ին անդամակցությամբ), իսկ մյուս դեպքերում՝ այդ ժողովրդի էթնիկ գտումներով և ցեղասպանությամբ:

Մենագրության խնդիրները և դրանց լուծման ուղիները: Մենագրությունը նվիրված է այդ հակասության պատճառների, ինչպես նաև աղետալի իրադարձությունները կանխելու կամ դադարեցնելու և ինքնորոշման հակամարտությունները միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին խստորեն համապատասխան լուծելու հնարավորությունների բացահայտմանը: Այդ նպատակով.

- Ապացուցվել է միջազգային իրավունքի նորմերով և սկզբունքներով նախատեսված հակամարտությունների կարգավորման գործընթացի իրավական բաղադրիչի տեսական հիմքերի անթերի լինելը, ինչպես նաև անլուծելի հակամարտությունների տեսության ոչ պիտանիությունը (Գլուխ II):

- Առաջարկվում է բանակցային գործընթացի հարացույց (պարադիգմ), որը զգալիորեն նվազեցնում է բանակցությունների տևողությունը և թույլ է տալիս հաղթահարել բանակցային գործընթացում փակուղային իրավիճակը, որը միշտ առաջանում է ինքնորոշվող կողմի քաղաքական կարգավիճակը որոշելու փորձի ժամանակ: Այդ նպատակով առաջարկվում է բանակցությունների օրակարգում գտնվող հարցերը բաժանել երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկվում են այն հարցերը, որոնց լուծման համար միջազգային իրավունքը նախատեսում է կարգավորման մեխանիզմներ (այդ որոշումները պետք է ի կատար ածվեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի ընդունմամբ), իսկ երկրորդ խմբում ներառվում են մնացած հարցերը, որոնք պետք է լուծվեն բանակցությունների միջոցով (Գլուխ II):

- Առաջարկվում է նոր աշխարհակարգի ձևավորման եռափուլ մոդել՝ հիմնված աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների աճող ինտենսիվության վրա (Գլուխ III):

- Ինքնորոշման հակամարտությունների (Արևելյան Թիմոր, Կոսովո, Լեռնային Ղարաբաղ) համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել են նոր աշխարհակարգի ձևավորման ժամանակ այդ հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների երեք փուլերի ազդեցության առանձնահատկությունները (Գլուխ IV):

- Այդ փուլերից յուրաքանչյուրում իրականացվում է ինքնորոշման հակամարտությունների լուծման համար համապատասխան ինստիտուտների ընդունած որոշումների վերլուծություն: Այն ցույց է տալիս, որ նոր աշխարհակարգի ձևավորման համար ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական պայքարում լարվածության աճի հետ այդ որոշումներն ավելի ու ավելի են հակասում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ինչը հնարավորություն է ստեղծում մետրոպոլիաների կողմից ռազմական գործողությունների վերսկսման, դրանց ընթացքում արգելված միջոցների կիրառման, էթնիկ զտումների և ցեղասպանության համար (Գլուխ IV):

- Բացահայտվել է, որ նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլում հաճախ նկատվում է հիմնական միջազգային ինստիտուտների (ՄԱԿ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, ԵԱՀԿ) անգործություն և միջազգային իրավունքի նորմերի խախտում, որի արդյունքում խորանում են միջազգային հարաբերությունների առկա խնդիրները: Դրանք լուծվում են ոչ թե միջազգային իրավունքի նորմերի, սկզբունքների, միջոցների և գործիքների հիման վրա, այլ պատերազմներ հրահրելու, ռազմական ուժի կիրառման ու ագրեսիայի, արգելված

միջոցների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների միջոցով: Այս գործընթացի հետագա էսկալացիան ամբողջովին կկործանի միջազգային հարաբերությունների հիմքերը, իսկ անպատժելիությունն ամեն կերպ կխրախուսի խնդիրների լուծումն արգելված և ոչ լեգիտիմ միջոցներով, այդ թվում՝ էթնիկ զտումների, ցեղասպանության և անգամ միջուկային զենքով: Միջազգային հարաբերությունները կանխատեսելի և կարգավորվող հուն վերադարձնելու միակ միջոցը միջազգային ինստիտուտների և միջազգային իրավունքի դերի վերականգնումն ու ամրապնդումն է, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի կոպիտ խախտումների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների հետևանքների շտկումը (Գլուխ IV):

ՄԱԿ-ի պատմությունը տպավորիչ թվով դեպքեր է գրանցել, երբ կազմակերպությունն ապահովել է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի անվերապահ իրացումը: Այս պրակտիկան ցույց է տալիս, որ պետականություն ձեռք բերելը ինքնորոշման իրավունքի իրացման ամենատարածված և, հետևաբար, բնական միջոցն է: ՄԱԿ-ի կանոնադրության վավերացումից հետո անցած տասնամյակների ընթացքում (մինչև 1979 թվականի սկիզբը) գրանցվել է 70 դեպք, երբ գաղութային երկրների ժողովուրդներն իրենց ինքնորոշման իրավունքն իրացրել են անկախ պետությունների ստեղծման միջոցով (United Nations Juridical Yearbook, 1980, 182-183): 1980-90-ական թվականներին ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման դեպքերը նվազել են, չնայած այն հանգամանքին, որ աշխարհում դեռ գոյություն ունեին ինքնորոշման մի քանի տասնյակ հակամարտություններ: 1990-ականներին այդ ճանապարհով ՄԱԿ-ի անդամ դարձան միայն յոթ խաղաղօվկիանոսյան կղզիների վրա տեղակայված պետություններ, ինչպես նաև Էրիթրեան: 2000-ականների առաջին տասնամյակում կազմակերպության անդամ դարձան ևս երկու երկրներ՝ Արևելյան Թիմորը և Հարավային Սուդանը: Պատահական չէ, որ հետազոտողները կարծում են, որ «իր բոլոր թերություններով հանդերձ, ՄԱԿ-ը ապացուցել է իր օգտակարությունը մարդասիրական և խաղաղարար գործունեության մեջ, ինչի հետ պետությունները համաձայն են, և շարունակում է մնալ համաշխարհային քաղաքականության մեջ օրինականության կարևոր աղբյուր» (Nye Joseph S. Jr. (2003). U.S. Power and Strategy After Iraq. Foreign Affairs. 82, 4, Jul/Aug: 60-73.):

Բնականաբար, այս կազմակերպության կարևորությունն առաջին հերթին պետք է դրսևորվի կրիտիկական իրավիճակներում, երբ առկա է մարդկության դեմ հանցագործությունների կատարման վտանգ, որոնք հանգեցնում են զանգվածային սպանությունների, էթնիկ զտումների և ցեղասպանության: Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան միջոցների համարժեքությունը կախված է երկու գործոնից՝ միջազգային իրավունքում նման նախադրյալները կանխելու կամ

վերացնելու համար անհրաժեշտ նորմերի և մեխանիզմների առկայությունից, ինչպես նաև դրանք օպերատիվ կերպով կիրառելու պատրաստակամությունից:

Ինչ վերաբերում է միջազգային իրավունքի նորմերին և մեխանիզմներին, որոնք կոչված են լուծելու ինքնորոշման հետ կապված հակամարտությունները, ապա մենագրությունն ապացուցում է, որ ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնարար նորմերից մեկն է և ունի բարձրագույն իրավական նորմի կարգավիճակ՝ *erga omnes* և *jus cogens* (ICJ 2004 Klabbers J. (2006). The Right to be Taken Seriously: Self-Determination in International Law. Human Rights Quarterly. 28, 1: 186-206; Rubin A. P. (2001). Actio Popularis, Jus Cogens and Offenses Erga Omnes? New England Law Review, 35, 2: 265-280, Advisory Opinion of the ICJ on “Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory” (09.07.2004, No 131), Legal Consequences for State of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276(1970), Advisory Opinion, ICJ Reports, 1971: 31-32.): Միջազգային իրավունքը հաստատում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի ինքնորոշման իրավունք (1948թ. խարտիա), որով նա որոշում է իր սեփական քաղաքական կարգավիճակը (1966թ. դաշնագիր)՝ ազատ ընտրելով հետևյալ ձևերից որևէ մեկը.

- ինքնիշխան և անկախ պետության ստեղծում,
- ազատ ասոցացված հարաբերություններ անկախ պետության հետ,
- ինտեգրում անկախ պետությանը,
- ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի ձեռքբերում ([https://undocs.org/en/A/RES/2625\(XXV\)](https://undocs.org/en/A/RES/2625(XXV))):

Ակնհայտ է, որ միջազգային իրավունքը հստակ և համակողմանիորեն ամրագրում է իրավական համակարգում ինքնորոշման իրավունքի կարգավիճակը և դրա իրացման ընթացակարգը: Հետևաբար, այն բանից հետո, երբ համապատասխան միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՄԱԿ-ի Միջազգային դատարանը կամ ԵԱՀԿ-ն, այս գործընթացը ճանաչում են որպես ինքնորոշման հակամարտություն, տեսականորեն խոչընդոտներ չեն լինում այն լուծելու միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան:

Էթնոքաղաքական հակամարտությունների լուծման խոչընդոտները: Կան մի քանի հանգամանքներ, որոնք լրջորեն խոչընդոտում են այս կամ այն հակամարտության կարգավորմանը: Դրա արդյունքում այդ գործընթացները շարունակվում են մի քանի տասնամյակներ:

Նախ, դա պայմանավորված է հարցի բարձր զգայությամբ: Ազդեցիկ երկրները աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ժամանակ հաճախ այս կամ այն ձևով ազդում են հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա՝

իրադարձությունների զարգացումը ցանկալի հունով ուղղորդելու համար՝ ցինիկաբար անտեսելով միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները:

Երկրորդ հանգամանքը կապված է խնդրի և դրա լուծման միջգիտակարգային բնույթի հետ, որոնց ճիշտ ընկալումը պայմանավորված է միաժամանակ ինչպես քաղաքագիտության, այնպես էլ միջազգային իրավունքի ոլորտներում խոր գիտելիքներ ունենալով:

Հազվադեպ են մասնագետները, ովքեր ունեն անհրաժեշտ գիտելիքներ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ոլորտներում: Նույնիսկ փորձառու հետազոտողները, ովքեր որոշակի հաջողությունների են հասել իրենց ոլորտում, միշտ չէ, որ կարողանում են ճիշտ լուծում գտնել վերոհիշյալ հետազոտական խնդրի համար: Միջազգային բանակցությունների ոլորտում հայտնի մասնագետներ Զարթմանը, Հոփմանը, Բերկովիչը և այլք 1980-ականներին առաջարկել են անլուծելի հակամարտությունների տեսություն՝ հակամարտության լուծման բացակայությունը բացատրելով կողմերի պատրաստակամության բացակայությամբ: Նման մեկնաբանությունը հակասում է միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին, որում ասվում է, որ անվտանգության սպառնալիքի կամ մարդկության դեմ կատարվող հանցագործությունների դեպքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պետք է անհապաղ արձագանքի և կանխարգելիչ կամ հարկադրական միջոցներ ձեռնարկի դրանք կանխելու կամ դադարեցնելու համար:

Հակամարտության կարգավորման գործընթացում հիմնարար սխալն այն է, որ բանակցությունների առարկան ոչ միայն հակամարտությունից բխող հարցերն են, ինչպիսիք են փախստականների վերադարձը, խաղաղապահների տեղակայումը և սահմանների որոշումը, այլև գլխավոր հարցը՝ ինքնորոշման ձգտող կողմի քաղաքական կարգավիճակը: Դա հնարավոր չէ լուծել «Խնդիրների համատեղ լուծման» (Joint problem-solving) և «Գործարքային» (Bargaining)՝ բանակցությունների դասական հարացույցների միջոցով (Khrustalyov M. (2004) Methodology for analyzing international negotiations, International Trends, 2, 6. <http://old2.intertrends.ru/public/old/sixth/006.htm>), քանի որ դրանք կիրառելի են միայն այն հարցերի դեպքում, երբ կա փոխզիջման հնարավորություն: Սակայն ինքնորոշման վերաբերյալ հակամարտությունների կարգավորման պատմության մեջ չի եղել մեկ դեպք, երբ ինքնորոշվող կողմի քաղաքական կարգավիճակը որոշվել է փոխզիջման հիման վրա:

Մենագրությունն առաջարկում է ինքնորոշման հակամարտությունների կարգավորման բանակցային գործընթացի կազմակերպման նոր հարացույց՝ օրակարգում գտնվող հարցերը երկու՝ իրավական և քաղաքական խմբերի բաժանելու

միջոցով: Առաջինը որոշվում է միջազգային իրավունքի հիման վրա, իսկ երկրորդը՝ բանակցությունների միջոցով: Դա թույլ է տալիս այդ գործընթացն իրականացնել միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, այն պաշտպանել քաղաքական սուբյեկտների մանիպուլյացիաներից և զգալիորեն կրճատել բանակցային գործընթացի տևողությունը: Ըստ այդ սցենարի՝ Մինսկի խմբի համանախագահները՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ներկայացուցիչները, ղեկավարել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը 15 տարի (2007-2021 թվականներին):

Սակայն նոր աշխարհակարգի ձևավորման համար սաստկացած պայքարի ներքո համանախագահների ազդեցությունը բանակցային գործընթացում 2018 թվականից սկսեց թուլանալ: Մասնագետների փոխարեն ներգրավվեցին խնդրին անտեղյակ քաղաքական գործիչներ (Եվրոպական խորհրդի նախագահ Շ. Միշել, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Է. Մակրոն, ՀՀ վարչապետ Ն. Փաշինյան և այլք): Դրա արդյունքում միջազգային կազմակերպությունների մեխանիզմները (ԵԱՀԿ Մինսկի խումբ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ և այլն) կաթվածահար եղան, և համանախագահ երկրների ներկայացուցիչները 2021 թվականից սկսած դադարեցրին համատեղ գործունեությունը:

Հետևաբար, կարգավորման այս կամ այն հետագծով գործընթացների զարգացման պատճառները լիովին բացահայտելու համար անհրաժեշտ է ոչ միայն հաշվի առնել այդ գործընթացների համապատասխանությունը միջազգային իրավունքին, այլև ուսումնասիրել աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ազդեցությունը ինքնորոշման հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա:

Վերլուծության համար ընտրվել են ինքնորոշման երեք դեպքեր՝

1) Արևելյան Թիմոր. ինքնորոշումը ճանաչվել է 1995 թվականին և գործընթացը հաջողությամբ ավարտվել է 2002 թվականին՝ ՄԱԿ-ին անդամակցելով;

2) Կոսովո. ինքնորոշումը ճանաչվել է 2004 թվականին: Ինքնորոշման գործընթացը հաջողությամբ զարգացել է, բայց չի հասել ՄԱԿ-ին անդամակցության վերջնական փուլին;

3) Լեռնային Ղարաբաղ. ինքնորոշումը ճանաչվել է 2007թ., այդ շրջանակներում բանակցությունները տևել են 15 տարի, սակայն 2018թ. ձախողվել են, ինչը հանգեցրել է 2020թ. ուժանակալի ագրեսիային և 2023թ. էթնիկ զտումներին ու ցեղասպանությանը:

Աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը: Այդ դեպքերի ընտրությունը, պայմանավորված ինքնորոշման գործընթացների բազմավեկտորայնությամբ, արդյունավետ է դրանց վրա եռափուլ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցության ուսումնասիրման տեսանկյունից: Այդ փուլերից առաջինն ընդգրկում է 1991-ից 2008 (2014) թվականներն ընկած ժամանակահատվածը, երկրորդն ընդգրկում է 2008 (2014) թվականից մինչև 2021 թվականը ընկած ժամանակահատվածը, իսկ երրորդը շարունակվում է 2021 թվականից (Torosyan Tigran & Vardanyan Arax. (2024). The impact of geopolitical transformations on the settlement of the Nagorno-Karabakh conflict: selfdetermination or genocide? Dynamics of Asymmetric Conflict, 17, 3: 221-238, <https://doi.org/10.1080/17467586.2024.2370245>):

Առաջին և երկրորդ փուլերի տարանջատման անորոշությունը (2008-14թթ.) պայմանավորված է նրանով, որ հարաբերությունների վատթարացման առաջին լուրջ նշաններն ի հայտ եկան Մյունխենի անվտանգության համաժողովում 2007թ., երբ Ռուսաստանի նախագահը անհամաձայնություն հայտնեց միաբևեռ աշխարհակարգ ձևավորելու ԱՄՆ ձգտման հետ (Putin's speech at the Munich Security Conference. 10 February. <http://www.kremlin.ru/events/president/transcripts/24034>): Հաջորդ տարի՝ 2008 թվականին, Վրաստանն արևմտյան գործընկերների աջակցությամբ հրահրեց վրաց-ռուսական հնգօրյա պատերազմը (Independent International Fact Finding Mission on the Conflict in Georgia Report, September, 2009. https://www.mpil.de/en/pub/publications/archive/independent_international_fact.cfm):

2014 թվականին ուկրաինական հակամարտության սկսվելուց հետո վերջնականապես պարզ դարձավ, որ նոր փուլ է սկսվել նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում:

1990-ականների սկզբին Խորհրդային Միության և Հարավսլավիայի կոմունիստական կայսրությունների փլուզումը առաջացրեց էթնոքաղաքական հակամարտությունների նոր ալիք: Դրանց դրսևորման տեսակետից առանձնացան երկու հիմնական տարածաշրջաններ՝ Բալկանները և Հարավային Կովկասը: Ոչ միայն այն պատճառով, որ Եվրոպան 1990-ականների սկզբին զինված բախումների թվով «առաջատար» դարձավ այդ օջախների պատճառով (Smith D. (2004). Trends and Causes of Armed Conflict. Berghof Research Center for Constructive Conflict Management. https://berghoffoundation.org/files/publications/smith_handbook.pdf), կամ որ երկու տարածաշրջանները երկար ժամանակ եղել են կոմունիստական կայսրությունների մի մասը, որտեղ ներքին վարչական սահմանները հաստատվում էին կամայականորեն կամ ըստ անցյալում մեկ այլ կայսրության պատկանելության (Smirnov P. (2006). The "Flickering regime" of self-determination conflicts in Eastern Europe. International Trends, 4, 2. <http://old2.intertrends.ru/old/eleveth/002.htm>): Այդ կայսրությունների փլուզման արդյունքում նորաստեղծ պետությունների սահմանները

բաժանեցին բնիկ ժողովուրդները (սերբերը հայտնվեցին Սերբիայում, Խորվաթիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, հայերը՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, օսերը՝ Վրաստանում և Ռուսաստանում և այլն) և ինքնորոշման հակամարտությունների պատճառ դարձան (Torosyan T. (2010). Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno-Karabakh. Yerevan.): Այդ հակամարտություններից մի քանիսը՝ Լեռնային Ղարաբաղն ու Կոսովոն, հաճախ համարվում են աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող: Դեռևս Խորհրդային Միության փլուզումից առաջ նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղը կարող է կամ կապող օղակ լինել Թուրքիայի և Արևելքի մահմեդականների միջև, կամ խոչընդոտ լինել նրանց ուղիղ կապի համար՝ կախված նրանից, թե որ կողմը կպահպանի վերահսկողությունը դրա նկատմամբ (Swietochowski T. (1985). Russian Azerbaijan 1905-1920. Cambridge University Press, New York and Cambridge): Որոշ հետազոտողներ (Cornell S. E. (1999). The Nagorno-Karabakh Conflict. Report No 46, Department of East European Studies, Uppsala University), որոնք ուսումնասիրել են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից, այն կարծիքին էին, որ այն կարող է երրորդ համաշխարհային պատերազմի բռնկման պատճառ դառնալ:

Կոմունիստական կայսրությունների փլուզումը հաստատեց կոմունիստական գաղափարախոսության ձախողումը, իսկ դրա հետևանքները՝ ավելի քան 20 նոր անկախ պետությունների ձևավորումը, տասնյակից ավելի «սառեցված» էթնոքաղաքական հակամարտությունների վերսկսումը և երկբևեռ աշխարհակարգի փլուզումը, արմատապես փոխեցին համաշխարհային պատմության ընթացքը: Վերջինը խթան հանդիսացավ նոր աշխարհակարգի ձևավորման մեկնարկի համար:

Այդ գործընթացի առաջին փուլում աշխարհաքաղաքական բաղադրիչը գրեթե չէր դրսևորվում: Սակայն աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների երկրորդ (2008(14)-2021թթ.) և հատկապես երրորդ (2021 թվականից) փուլերում այն վճռորոշ ազդեցություն ունեցավ միջազգային հարաբերությունների բոլոր հիմնական գործընթացների վրա, ներառյալ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների գործունեությունը, մասնավորապես, էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման ուղղությամբ:

Նոր աշխարհակարգ՝ առանց միջազգային իրավունքի: Ձևավորվող նոր աշխարհակարգում ցանկալի ազդեցիկ դիրքերին հասնելու համար հիմնական դերակատարներն ավելի ու ավելի հաճախ սկսեցին անտեսել ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ոչնչացնել դրանց հիման վրա մշակված և տասնամյակներ շարունակ կիրառվող հակամարտությունների լուծման հասկացությունները, հարացույցներն ու սխեմաները: Նրանց չի սթափեցնում անգամ այն փաստը, որ հաճախ դա արվում է

այս կամ այն ժողովրդի էթնիկ զտումների և/կամ ցեղասպանության գնով, որոնք «մեղավոր» են միայն այն պատճառով, որ լրջորեն են վերաբերվել միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի կիրառման հնարավորությանը և ազդեցիկ երկրների առաջնորդների, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի հայտարարություններին, որ հակամարտությունները կկարգավորվեն բացառապես այդ նորմերի հիման վրա: Օրինակներն ակնհայտ են: ԱՄՆ նախագահը փորձում է «լուծել» Պաղեստինի ինքնորոշման հարցը՝ վերակենդանացնելով քսանհինգ տարվա վաղեմության մեռելածին գաղափարը (Pinkas A. (2025) The Best “New” Idea for Middle East Peace? It’s 25 Years Old. April 9, 2025, <https://newrepublic.com/article/193526/israel-palestinemiddle-east-peace-gaza-trusteeship>)՝ Գազայի հատվածից երկու միլիոն պաղեստինցիների այլ երկրներ վերաբնակեցնելու վերաբերյալ: Չի կարելի բացառել, որ Իսրայելի քաղաքական ղեկավարությունը, որը մարդկության դեմ հանցագործություններ է կատարել այդ տարածաշրջանում (Irish PM says Gaza is 'hell on earth', <https://www.euronews.com/my-europe/2025/05/08/irish-pm-accusesisrael-of-committing-war-crimes-in-gaza>), ոգեշնչված է եղել 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի օրինակից՝ 2023 թվականին էթնիկ զտումների և հայ բնակչության ցեղասպանության կիրառմամբ, ինչը մնացել է անպատիժ:

Մինչ այդ, սկսած 1990-ականների կեսերից, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ զբաղվում էին խմբի համանախագահները՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնք 15 տարի շարունակ կարգավորման բանակցություններ էին վարում 2007թ. նոյեմբերին իրենց առաջարկած բանակցային փաստաթղթի՝ Մադրիդյան սկզբունքների հիման վրա (Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia Athens. 1 December. <https://www.osce.org/cio/40626>), որոնք լիովին համապատասխանում էին միջազգային իրավունքի նորմերին (երեք սկզբունքներ, այդ թվում՝ ինքնորոշման իրավունք): Ավելին, 2016 թվականի ապրիլին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների) ակտիվ արձագանքի շնորհիվ, Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիան կասեցվեց 4 օրվա ընթացքում՝ նույնիսկ առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստի և համապատասխան բանաձևի ընդունման: Սակայն, երբ 2020 թվականին Ադրբեջանը 44-օրյա լայնածավալ ռազմական ագրեսիա սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ՝ թուրքական զինված ուժերի, սիրիացի վարձկանների ներգրավմամբ ու արգելված զինատեսակների կիրառմամբ, իսկ 2023 թվականին իրագործեց մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ էթնիկ զտումներ և ցեղասպանություն, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից գրեթե արձագանք չեղավ:

Նույնիսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի ընդունումը տապալվեց Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների ջանքերով:

Վերջին տարիներին (նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի վերջին փուլում) կոնֆլիկտային իրավիճակներում միջազգային իրավունքի անտեսումը կրում է համակարգված բնույթ: Դա հատկապես նկատելի է Եվրասիական կենտրոնում՝ ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Սիրիայում, Գազայի հատվածում, Ուկրաինայում և այլն: Թուրքիան օկուպացրել է Սիրիայի տարածքները, որպեսզի վերահսկի իրադարձությունների զարգացումը հիմնականում քրդական Աֆրին, Քոբանի և Ղամիշլի շրջաններում՝ չնայած ամերիկյան և ռուսական ռազմական ստորաբաժանումների ներկայությանը: Իր նպատակներին հասնելու համար Անկարան աջակցել է սիրիական ընդդիմությանը՝ դառնալով դրա հիման վրա Սիրիական ազգային բանակի ձևավորման հարթակ, ինչպես նաև համագործակցել է «Հայաթ Թահրիր աշ Շամ» (HTS) ջիհադիստական խմբավորման առաջնորդի հետ՝ Ահմեդ Հուսեյն աշ Շարաայի գլխավորությամբ, որը նախկինում ծառայել է «Ալ Քաիդային» և ԴԱԻՇ-ին՝ «Ալ Նուսրայի ճակատի» առաջնորդ Աբու Մոհամմադ ալ Ջուլանի անվան ներքո (Suleymanov R. (2024). The Ottoman Empire strikes back: How Turkey became the main beneficiary of the Assad regime fall. The insider, 16 December 2024, <https://theins.press/en/politics/277246>): Հարևան պետության տարածքի օկուպացիայի միջոցով միջազգային իրավունքի կոպիտ խախտումը դատապարտելու փոխարեն նախագահ Թրամփը գովաբանել է նախագահ Էրդողանին՝ Ասադի տապալումը կազմակերպելու համար: Ընդ որում, Էրդողանի կազմակերպած զինված հեղաշրջման ժամանակ գլխավոր գործող անձ է դարձել «Հայաթ Թահրիր աշ Շամ» խմբավորումը, որը մինչ այդ ճանաչվել է ահաբեկչական (Resolution 2654 (2022), Adopted by the Security Council at its 9168th meeting, on 27 October 2022, https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B6D274E9C8CD3-CF6E4FF96FF9%7D/S_RES_2654.pdf): Բայց դա չի խանգարել Մեծ Բրիտանիայի վարչապետ Ք. Սթարմերին և Գերմանիայի պաշտպանության նախարար Բ. Պիստորիուսին՝ բանակցություններ վարելու այդ խմբավորման ղեկավարի, այժմ Սիրիայի նախագահ հռչակված Աշ Շարաայի հետ (Ostalsky A., (2024). The role of personality in Syrian history: How al-Julani rose to power. The insider, 11 December 2024, <https://theins.press/opinion/andrei-ostalsky/277303>):

Միջազգային իրավունքի անտեսումը լիովին դրսևորվեց նաև ուկրաինական հակամարտության «կարգավորման» գործընթացում: Ամեն ինչ սկսվեց Ղրիմի ինքնորոշման հռչակումից: Թվում էր, թե դա պարզ խնդիր է. միջազգային իրավունքը սպառիչ պատասխաններ է տալիս բոլոր հարցերին, և դրա կիրառումը թույլ կտա կարգավորել հակամարտությունը: Եթե այս դեպքը չէր համապատասխանում կոռեկտ ինքնորոշման պայմաններին, ապա հարցը լուծված էր՝ Ղրիմը մնում էր Ուկրաինայի

մաս: Եթե դա կոռեկտ ինքնորոշում էր, ապա պետք էր անցկացնել հանրաքվե, որպեսզի որոշվեր Ղրիմի ժողովրդի կամքը՝ իր քաղաքական կարգավիճակի վերաբերյալ, ինչպես սահմանված է միջազգային իրավունքով: Սակայն այդ ճանապարհով շարժվելու համար անհրաժեշտ էր ձևավորել հակամարտությունների կարգավորման խումբ՝ համապատասխան լիազորություններով համապատասխան միջազգային կազմակերպության (ՄԱԿ կամ ԵԱՀԿ) շրջանակներում: Փոխարենը, հակամարտությունը դարձավ աշխարհաքաղաքական դիմակայության հարթությունում Ուկրաինան, Ռուսաստանը և ԵՄ-ն մեծ հավակնություններ ունեցող ոչ բանիմաց քաղաքական գործիչների (Ֆրանսիայի նախագահ Մակրոն, Գերմանիայի կանցլեր Մերկել) քննարկման առարկա: Հակամարտությունը ոչ միայն չլուծվեց, այլև ընդլայնվեց. առճակատման մեջ ներգրավվեցին Դոնեցկի և Լուգանսկի մարզերը: Ավելին, 2022 թվականին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև լայնամասշտաբ պատերազմ սկսվեց, որի ընթացքում ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և ԵՄ-ն զգալի ֆինանսական ռեսուրսներ, զենք և հրահանգիչներ տրամադրեցին Կիևին: Թեև երկրորդ ժամկետով ընտրված նախագահ Թրամփը հայտարարել է «անիմաստ արյունահեղությունը դադարեցնելու մտադրության մասին, որը հարյուր հազարավոր երիտասարդների կյանք է խլել», հակամարտությունների կարգավորման սկզբունքները չեն փոխվել: Կարծես թե գոյություն չունեն միջազգային իրավունք, ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն, որոնք ունեն հակամարտությունների կարգավորման նորմեր, գործիքակազմ և բազմամյա փորձ: Մինչդեռ Թրամփը հայտարարել է, որ այդ հարցը պետք է լուծվի իր պատկերացումների հիման վրա:

ԱՄՆ նախագահը փորձել է նույն մոտեցումն օգտագործել պաղեստինյան հակամարտության կարգավորման համար: Նույն արհամարհանքը միջազգային իրավունքի, ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների նկատմամբ: Նա առաջարկում է «պարզ» լուծում՝ էթնիկ զտումներ իրականացնել Գազայի հատվածում և 2 միլիոն պաղեստինցիների արտաքսել մի երկիր, որը կհամաձայնի ընդունել նրանց:*

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետությունների մեծ մասի (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) կողմից միջազգային հարաբերություններում հակաիրավական գործողությունների այս շարքը կարելի է շարունակել երկար: Այն պետությունները, որոնք մշակել են միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը և պարտավոր են երաշխավորել դրանց կիրառումը, իրենք «չեն նկատում» դրանք, իրենց պարտավորություններն ու ոչ վաղ անցյալի իրենց դիրքորոշումները: Միգուցե նոր աշխարհակարգի համար պայքարի ծայրահեղ լարվածությունը բոլոր կանոնները մի կոդմ է մղում: Թե՛ արդեն դրսևորվում են ձևավորվող նոր աշխարհակարգի առաջին միտումները:

Իհարկե, միջազգային հարաբերությունների առանցքի՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների ոչնչացումը, առանց բարելավման հիմքեր ստեղծելու, նույնիսկ գոյություն ունեցող համակարգի հայտնի թերությունների դեպքում, մեծ հետքայլ կլինի այդ հարաբերություններում և լուրջ սպառնալիք՝ մարդկության անվտանգության ժամանակակից մարտահրավերների պարագայում: Սակայն չի կարելի անտեսել երկրորդ սցենարով իրադարձությունների զարգացման որոշ նկատելի նախադրյալներ:

«Կառավարելի քաոսը»՝ վրանգավոր մարտահրավեր նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլում: 1992 թվականին ամերիկացի դիվանագետ Սթիվեն Մանը «Parameters» ամսագրում (ԱՄՆ բանակի պատերազմի քոլեջի եռամսյակային հանդես) հրապարակեց «Քաոսի տեսություն և ռազմավարական միտք» հոդվածը, որը դարձավ միջազգային հարաբերություններում «կառավարելի քաոսի» օգտագործման մանիֆեստը: Արձանագրելով, որ «աշխարհին վիճակված է քաոսային լինել, քանի որ դինամիկ համակարգում մարդկային քաղաքականության բազմաթիվ մասնակիցներ բազմազան նպատակներ և արժեքներ ունեն» (Mann S. R. (1992). Chaos Theory and Strategic Thought. Parameters (US Army War College Quarterly), Vol. XXII, Autumn, pp. 54-68), նա պնդում էր, որ «մենք կարող ենք սովորել քաոսը և վերակազմավորումը ընկալել որպես հնարավորություններ, այլ ոչ թե կայունություն փնտրել՝ որպես պատրանքային նպատակ» (նույն տեղում): Մանը կարծում էր, որ «միջազգային միջավայրը քաոսային համակարգի հիանալի օրինակ է, և Քաոսի տեսության ինտրիգային ճյուղը՝ «ինքնակազմակերպված քննադատությունը», իդեալական է նման վերլուծության համար» (նույն տեղում): Ի հաստատումն իր դատողությունների՝ նա գալիս է այն եզրակացության, որ ««Փոթորիկ անապատում» գործողությունը ՄԱԿ-ի հավանությամբ պայմանավորելով՝ մենք սահմանափակել ենք մեր ապագա ռազմական հնարավորությունները: Կոնգրեսի, ամերիկյան հանրության և միջազգային հանրության մեծ մասը կսպասեն ՄԱԿ-ի հավանությանը՝ որպես ԱՄՆ-ի ուժի ապագա կիրառման լեգիտիմացման նախադրյալ: Յավոք, միջազգային օրինականության միջոցով նոր աշխարհակարգ ստեղծելու փորձը հանգեցրեց նրան, որ Սադդամ Հուսեյնը դարձավ հանդուգն, երկերեսանի և ամուր արմատավորված, մինչդեռ քրդերի ոչնչացումը շարունակվում է» (նույն տեղում):

Ավելի ուշ՝ 1996 թվականին, «Սանտա Ֆե» ինստիտուտի համաժողովում Մանը հանդես եկավ «Արձագանք քաոսին» զեկույցով, որը տպագրվել է Վաշինգտոնի Ազգային անվտանգության համալսարանի հրապարակած՝ համաժողովի նյութերի ժողովածուում (Mann S. R. (1997). The Reaction to Chaos. D. S. Alberts, & T. J. Czerwinski (Eds.), Complexity, Global Politics, and National Security, pp. 62-68. National Defense University, Washington DC.): Զեկույցը զարգացնում է «կառավարելի քաոսի» հիման վրա ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնարար վերափոխման վերոհիշյալ

գաղափարը՝ մերժելով միջազգային իրավունքի և միջազգային կազմակերպությունների, հատկապես ՄԱԿ-ի օգտակարությունը՝ որպես համակարգաստեղծ միջուկ: Նա հայտարարում էր. «Մենք պետք է զերծ լինենք պատրանքներից, երբ խոսքը միջազգային իրավունքի և նմանատիպ կառույցների սահմանների ու տեղին լինելու մասին է: Միջազգային իրավունքի երկարաժամկետ նպատակներն արժանի են ուշադրության, բայց մենք միշտ պետք է հաշվի առնենք, թե ինչ գին ենք վճարում դրա համար կարճաժամկետ հեռանկարում: Կայունության այս ձգտման մեջ կա ևս մեկ ասպեկտ, որն ինձ անհանգստացնում է: Դա խաղաղապահ ուժերի տարածումն է և ԱՄՆ զինված ուժերի՝ որպես խաղաղապահների, ավելի ու ավելի լայն օգտագործումը ... Մենք պետք է բաց լինենք ծայրահեղ իրավիճակներն արագացնելու և օգտագործելու ուղիներ փնտրելու համար, եթե դա ծառայում է մեր ազգային շահերին, օրինակ՝ Իրաքի զինված ուժերի և Սադամի պետության ոչնչացման միջոցով: Գլխավորը ազգային շահն է, այլ ոչ թե միջազգային կայունությունը: Իրոք, մենք արդեն իրականացնում ենք մի շարք քաղաքական միջոցառումներ, որոնք արագացնում են քաոսը, անկախ այն բանից, թե մենք գիտակցում ենք դա, թե ոչ. մենք խթանում ենք ժողովրդավարությունը, խթանում ենք շուկայական բարեփոխումները և տարածում ենք զանգվածային լրատվության միջոցները մասնավոր հատվածի միջոցով» (նույն տեղում):

Հաշվի առնելով 1990-ականներին Միացյալ Նահանգների ակադեմիական և դիվանագիտական շրջանակներում միաբևեռ աշխարհակարգ ստեղծելու գաղափարով համընդհանուր հմայվածությունը՝ Մանի «տեսությունը» կարելի է դիտարկել որպես այդ գաղափարի իրականացման ֆանտազմագորիկ մոդել, որը ձևավորվել է այդ ժամանակի միջավայրի ազդեցության ներքո:

Այդուհանդերձ, երկու փաստ մտահոգիչ է: Վերջին տարիներին նույնիսկ ազդեցիկ պետություններում իշխանության են գալիս մեծ հավակնություններ ունեցող ոչ բանիմաց մարդիկ, որոնց կարող են գրավիչ թվալ նման մոդելները՝ իրենց հավակնությունների իրականացման տեսանկյունից: Պատահական չէ, որ միջազգային հարաբերություններում քաոսի խորացման բազմաթիվ նշաններ են նկատվում՝ «գունավոր» հեղափոխություններ, ժողովրդավարացման գործընթացների օգտագործում՝ «անցանկալի» կառավարությունները փոխելու համար, միջազգային իրավունքի և համապատասխան ինստիտուտների անտեսում, մարդկության դեմ ուղղված ակնհայտ հանցագործություններ, այդ հանցագործությունների մեխանիզմների օգտագործում՝ հակամարտությունները «լուծելու» համար և այլն:

Ակնհայտ է, որ միջազգային իրավունքի և համապատասխան ինստիտուտների անտեսումը հանգեցնում է աղետալի հետևանքների՝ մարդկության դեմ հանցագործությունների (պատերազմական հանցագործություններ, էթնիկ զտումներ և ինքնորոշված ժողովուրդների ցեղասպանություն), միջազգային իրավունքը

վերածում է ինքնորոշված ժողովուրդների համար մահացու ծուղակի խայծի, ինչպես նաև աղետալի սպառնալիք է ստեղծում մարդկության համար: Հետևաբար, անհրաժեշտ է ոչ միայն հրատապ վերականգնել և ամրապնդել միջազգային իրավունքի ու համապատասխան ինստիտուտների դերը միջազգային հարաբերություններում, ամրագրել համապատասխան գործիքների պարտադիր կիրառումը, այլև կանխել մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատժել դրանց իրականացնողներին և վերականգնել տուժած ժողովուրդների, խմբերի ու անհատների իրավունքները:

Այսպիսով, միջազգային հարաբերությունների ամենաբարդ խնդիրներից մեկի՝ ինքնորոշման հակամարտությունների լուծման վրա աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ազդեցության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, հատկապես ինքնորոշվող ժողովուրդների դեմ հանցագործությունների կանխարգելման, այլև մարդկության համար աղետալի հետևանքներով հղի՝ միջազգային հարաբերություններում «կառավարելի քաոս» ստեղծելու միտումների բացահայտման տեսակետից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էթնոքաղաքական հակամարտությունների լուծման տեսակետից միջազգային իրավունքի գործիքների օգտակարության, դրանց կիրառման կոնկրետ դեպքերի, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման վրա աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների գործընթացների ազդեցության վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Միջազգային իրավունքը՝ որպես ինքնորոշման հակամարտությունների լուծման լիարժեք հիմք

1.1. Էթնոքաղաքական հակամարտությունների և դրանց լուծման գործընթացների ուսումնասիրության համար ավանդաբար օգտագործվող երկչափ մոդելները, որոնք հիմնված են քաղաքական ու էթնոմշակութային փոփոխականների օգտագործման վրա, անարդյունավետ են սեցեսիայի (օրինական անջատման) ուսումնասիրության պարագայում, որը ինքնորոշման նպատակ ունեցող հակամարտությունների ամենաբարդ դեպքն է:

1.2. Էթնոքաղաքական հակամարտությունների, դրանց կարգավորման գործընթացների և սեցեսիաների հաջողության գնահատման բարդությունը պահանջում է դրանց ուսումնասիրության համալիր և միջգիտակարգային մոտեցման կիրառում, որը կարող է ապահովվել եռաչափ մոդելների կառուցմամբ՝ որպես փոփոխականներ օգտագործելով ինչպես քաղաքական, էթնոմշակութային, այնպես էլ իրավական գործոնները:

1.3. Իրավական բաղադրիչի՝ միջազգային իրավունքի նորմերի ներառումը վերլուծության մեջ առանցքային նշանակություն ունի, քանի որ այն թույլ է տալիս հակամարտությունները և դրանց կարգավորման գործընթացները բաժանել երկու առանձին խմբերի: Ընդ որում, ոչ միայն հակամարտության կողմերի նպատակադրման, այլև սեցեսիայի կոռեկտության չափանիշի համապատասխան՝ ըստ ազգերի ինքնորոշման սկզբունքի կոռեկտ կիրառման: Հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական ուսումնասիրությունը այդ երկու խմբերից յուրաքանչյուրի համար պետք է իրականացվի առանձին:

1.4. Մենագրությունն առաջարկում է կիրառել ինքնորոշման էթնոքաղաքական հակամարտությունների վերլուծության եռաչափ միջգիտակարգային մոտեցում: Այդ մոտեցման կիրառումը կարող է իրականացվել երկու փուլով: Առաջին փուլում առաջարկվում է որոշել հակամարտության բնույթը՝ ինքնորոշման պայմաններին համապատասխանության տեսանկյունից, և հակամարտությունները բաժանել այդ պայմաններին համապատասխանող և չհամապատասխանող խմբերի: Յուրաքանչյուր խմբի համար պետք է իրականացվեն ուսումնասիրություններ՝ հավաստիությունն ապահովելու և արդյունքների խեղաթյուրումից խուսափելու համար: Երկրորդ փուլում ընտրվում են յուրաքանչյուր խմբին վերաբերող դեպքերը՝ ուսումնասիրվող դեպքի հետ համեմատելու համար: Այդ ընտրության նպատակն է ընտրել այն չափանիշները, որոնք լավագույնս համապատասխանում են հետազոտության նպատակներին: Երկրորդ փուլում վերլուծվում են նաև տարբեր փոփոխականներ, որոնք էապես ազդում են կարգավորման գործընթացի ընթացքի վրա:

1.5. Համեմատական մեթոդի արդյունավետությունն ապահովելու համար առանցքային նշանակություն ունի համեմատվող հակամարտությունների բնույթների նույնականությունը: Հետևաբար, մինչ այն կիրառելը, նախ անհրաժեշտ է որոշել հակամարտությունների բնույթը՝ միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում որոշել՝ հակամարտություններն ինքնորոշման բնույթի են, թե ոչ:

1.6. Հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական վերլուծության արդյունավետությունն ապահովելու նպատակով համեմատական վերլուծությունը պետք է իրականացվի երկու հարթություններում՝ միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերի և հիմնական իրադարձությունների:

1.7. Առանցքային իրադարձությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս գնահատել կարգավորման գործընթացի ընթացքը, բացահայտել տարբեր գործոնների ազդեցությունն այդ գործընթացի վրա, ինչպես նաև վերանայել կարգավորման ռազմավարությունն ու մարտավարությունը: Տվյալների բազայի անհրաժեշտ ծավալի առկայության դեպքում վերլուծությունը թույլ է տալիս որոշել փոփոխականների հավանական ազդեցությունը: Դա հեշտացնում է

հակամարտությունների ուսումնասիրություններում փոփոխականների ընտրությունը՝ կախված խնդրի դրվածքից:

1.8. Հակամարտությունների լուծման իրավասություն ունեցող ազդեցիկ միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերի վերլուծությունը թույլ է տալիս որոշել այդ կազմակերպության և, հետևաբար, միջազգային հանրության մոտեցումը հակամարտությունների լուծման հեռանկարներին և դրանց իրականացման գործում դրա դերին: Քվեարկության և բանաձևերի ընդունման ընթացքում ազդեցիկ անդամ պետությունների դերակատարության վերաբերյալ տվյալներն առանձին ուսումնասիրության առարկա են:

1.9. Հակամարտությունների լուծման գործընթացները վերլուծելու նպատակով համեմատական մեթոդի կիրառման դեպքում առանձնահատուկ նշանակություն ունեն երկու գործոններ՝ համադրելի դեպքերի քանակի ընտրությունն ու փոփոխականների ընտրությունը: Վերջինս հատկապես բարդ խնդիր է, քանի որ դրա արդյունավետ լուծումը կարող է երաշխավորվել փոփոխականների և դրանց փոխազդեցությունների տիրույթի միջև հավանական փոխկապակցվածությունների բացահայտման շնորհիվ:

1.10. Ինքնորոշման իրավունքին վերաբերող միջազգային իրավունքի նորմերի համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք լիարժեք և բավարար են ինքնորոշման հետ կապված հակամարտությունների առանցքային հարցի՝ ինքնորոշվող ժողովրդի քաղաքական կարգավիճակի որոշման համար: Այդ ժողովուրդն իրավունք ունի կամքի ազատ արտահայտությամբ՝ առանց որևէ պետության կամ կազմակերպության միջամտության, որոշել իր քաղաքական կարգավիճակը՝ ընտրելով հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝ անջատում և անկախ պետության ստեղծում, անջատում և միացում գոյություն ունեցող անկախ պետությանը, անջատում և ասոցացված հարաբերությունների ստեղծում անկախ պետության հետ կամ ցանկացած այլ կարգավիճակ, որն այդ ժողովուրդը կընտրի իր համար:

1.11. Քանի որ ինքնորոշման հակամարտությունները հաճախ հանգեցնում են զինված բախումների, դրանց լուծման համար միջնորդությունը գործնականում անխուսափելի է: Սակայն «Գործարքի հարացույցի» հիման վրա կազմակերպված միջնորդական միջոցառումներն անարդյունավետ են. բանակցությունները տևում են տասնամյակներ և այդ հակամարտությունները հաճախ դառնում են «անլուծելի»: Նման իրավիճակների հանգուցալուծումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերը ժամանակի ընթացքում հայտնվում են անելանելի վիճակում և ստիպված են լինում ընդունել միջնորդների առաջարկած որոշումը: Փաստորեն, այս դեպքում հարացույցը չի գործում և լուծումը պարտադրվում է հակամարտող կողմերին:

1.12. Մենագրությունն առաջարկում է այլ ռազմավարություն, ըստ որի հակամարտության պատճառ դարձած հարցերը (ինքնորոշվող ժողովրդի քաղաքական կարգավիճակը) պետք է առանձնացվեն հակամարտության

կարգավորման օրակարգից և լուծվեն միջազգային իրավունքի հիման վրա՝ իրավական հարացույցի միջոցով: Դրանից հետո մյուս հարցերը պետք է քննարկվեն և լուծվեն՝ օգտագործելով բանակցությունների ավանդական՝ «Գործարքի հարացույցը»: «Անլուծելի» դարձած ինքնորոշման հակամարտությունների լուծման այս մոտեցումը ոչ միայն միջազգային իրավունքի հիման վրա դրանց լուծման արդար և օրինական միջոց է, այլև թույլ է տալիս կարճ ժամանակում հաղթահարել դրանց «անլուծելիությունը», վերջ դնել ազգամիջյան լարվածությանն ու հազարավոր մարդկանց տառապանքներին: Բացի այդ, առաջարկվում է պատերազմի սկսվելուց կամ վերսկսվելուց խուսափելու կանխարգելիչ մեխանիզմ, որը, ի լրումն այդ նպատակին ուղղված միջազգային իրավունքի նորմերի, կօգնի խուսափել ողբերգական հետևանքներից: Այդ մեխանիզմի համաձայն, երբ մետրոպոլիան փորձում է վերսկսել ռազմական գործողությունները, միջնորդ կազմակերպությունը պետք է պարտադրի միջազգային իրավունքով սահմանված ինքնորոշման իրացման գործողություններ և անկախության ճանաչում:

II. Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաները կարևոր գործոն են ինքնորոշման հակամարտությունների կարգավորման գործընթացում

2.1. 1991 թվականին Խորհրդային Միության և երկբևեռ աշխարհակարգի փլուզումներից հետո թվում էր, թե իրադարձությունները կզարգանան առանց մեծ լարվածության, իսկ աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների տրամաբանական արդյունքը կլինի Միացյալ Նահանգների գլխավորությամբ միաբևեռ աշխարհակարգի հաստատումը: Հավանաբար, նման ակնկալիքներ ուներ Վաշինգտոնը, քանի որ հետխորհրդային տարածքի «յուրացման» ուղղությամբ ոչ մի հատուկ ջանք չէր գործադրում՝ սահմանափակվելով սոսկ «փափուկ ուժով»: Դա միանգամայն խելամիտ էր թվում, քանի որ Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ ժառանգորդ, երկար տարիներ ուժասպառ և ներքաղաքական խնդիրների վրա կենտրոնացած էր թվում, իսկ Չինաստանը, չնայած տպավորիչ տնտեսական արդյունքներին, պատրաստ չէր ռազմական և քաղաքական բաղադրիչներով մրցակցել Միացյալ Նահանգների հետ:

2.2. Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը դարձել են նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի գլխավոր դերակատարները, իսկ Թուրքիան Եվրասիական կենտրոնում այդ գործընթացի հիմնական ուղղություններից մեկի կարևոր մասնակիցն է: Այս ուսումնասիրությունում դիտարկվում են ոչ միայն ռուս-ամերիկյան հարաբերությունները, այլև թուրք-ամերիկյան և ռուս-թուրքական հարաբերությունները: Նոր աշխարհակարգի ձևավորման վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա երեք փուլ. առաջին փուլը՝ 1991-2008(2014) թվականներին, երկրորդը՝ 2008(2014)-21 թվականներին և երրորդը՝ 2022 թվականից: Առաջին երկու

փուլերի հիմնական իրադարձությունները տեղի են ունեցել Եվրասիական կենտրոնում, իսկ երրորդ փուլինը՝ Ուկրաինայում:

2.3. Ռուս-ամերիկյան պայքարը, որը նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի մի մասն է, հսկայական ազդեցություն ունի Հարավային Կովկասի տարածաշրջանի իրադարձությունների վրա: Այս աշխարհաքաղաքական մրցակցությունն անցել է զարգացման երեք փուլ՝ հիմնական գործընթացի համեմատ որոշ տեղաշարժերով: Առաջինը «ռոմանտիկ» փուլն էր (1991-2007), որը բնութագրվում էր համագործակցության միտումով: Երկրորդ փուլում (2007-2021) տեղի ունեցավ փոփոխություն դեպի առճակատման մոտեցում: Իսկ երրորդ փուլը (2021 թվական - ներկա) բնութագրվում է կատաղի դիմակայությամբ:

2.4. Ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական պայքարի ազդեցությունը հատկապես մեծ է Հարավային Կովկասի երեք ճանաչված պետությունների և Ուկրաինայի աշխարհաքաղաքական կողմնորոշումների վրա (2013 թվականից), ինչպես նաև այդ տարածաշրջանում էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա: Ազդեցիկ երկրների կողմից այդ կողմնորոշումներն ուղղորդելու տեսանկյունից հակամարտությունների կարգավորման գործընթացները զգայուն և առավել ազդեցիկ գործոններ են:

2.5. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մնում է չկարգավորված ոչ թե այն պատճառով, որ այն անլուծելի է, այլ որ հակամարտության կարգավորումն անհնարին է կիրառվող «Գործարքի բանակցային հարացույցի» հիման վրա: Վերջինը, հատկապես Լեռնային Ղարաբաղի դեպքում, թույլ է տալիս միջնորդներին՝ Ռուսաստանին և Միացյալ Նահանգներին, խուսափել կտրուկ դիրքավորումներից՝ պահպանելով Հայաստանն ու Ադրբեյջանը իրենց ազդեցության ներքո պահելու հնարավորությունը: Վերջին տասնամյակների ընթացքում հակամարտությունները (Արևելյան Թիմոր, Հարավային Սուդան, Էրիթրեա, Կոսովո) լուծվել են այն դեպքերում, երբ այդ տարածաշրջաններում չեն ծագել աշխարհաքաղաքական շահերի սուր բախումներ, և երբ միջազգային հանրությունն ու միջնորդները հասել են միջազգային իրավունքից բխող լուծումների:

2.6. Այն հակամարտությունները (մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը), որոնք գտնվում են աշխարհաքաղաքական սուր պայքարի գոտիներում, կարող են ունենալ երկու հնարավոր լուծումներից որևէ մեկը: Առաջին դեպքում բանաձևը կձևակերպվի նոր աշխարհակարգի համար աշխարհաքաղաքական պայքարի ավարտից հետո՝ առկա իրավիճակի և նորմատիվ-իրավական համակարգի հիման վրա: Սակայն, եթե հակամարտության կողմերը խախտեն ստատուս քվոն, ապա աշխարհաքաղաքական իրավիճակի սրման պայմաններում գործընթացները կարող են անկառավարելի դառնալ, ինչը տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի դեպքում: Սակայն դա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներին չի ազատում պատասխանատվությունից, քանի որ տուժել է ինքնորոշվող կողմը, որին նրանք պարտավոր էին պաշտպանել:

Մատնանշումը, որ Հայաստանի իշխանությունը կողմ է եղել տեղի ունեցածին, չի կարող արդարացում լինել, քանի որ այն իրավունք չունի ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ու ազդելու բանակցությունների ընթացքի վրա:

2.7. ԽՍՀՄ փլուզումից հետո, կորցնելով իր նախկին նշանակությունը՝ որպես դեպի Մերձավոր Արևելք ու Նեղուցների շրջան խորհրդային էքսպանսիան զսպող խոշոր դերակատար, Թուրքիան ձգտում էր ամրապնդել իր կարևոր նշանակությունը, որպեսզի շահեկան դիրք զբաղեցնի ձևավորվող աշխարհակարգում և տարածաշրջանում: Առաջին փորձը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր դերակատարությունն ուժեղացնելն էր «թուրքական մոդելի» ներդրման միջոցով, որը ձախողվեց ֆինանսական, տնտեսական և քաղաքական ռեսուրսների սղության պատճառով: Երկրորդ մոտեցումը Ռուսաստանի և Արևմուտքի միջև հակասությունների օգտագործումն էր՝ երկու կողմերից օգուտներ քաղելու համար: Չնայած այս ռազմավարությունն ինչ-որ առումով հաջող էր, այն նաև վտանգի տակ դրեց Անկարայի մասնակցությունը մի շարք ռազմավարական նախագծերի: 2016 թվականից Անկարան գրեթե ամբողջությամբ կենտրոնացավ Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա: Հատկապես ուշագրավ են կարևոր դերակատարությունը «Թուրքական հոսք» գազատարով ռուսական գազը Եվրոպա տեղափոխելու նախագծում և ռուսական հակաօդային պաշտպանության համակարգերի (Ս-400) ձեռքբերումը: Հատկանշական է նաև Ռուսաստանի ֆինանսական ու մասնագիտական աջակցությամբ «Աքքույու» ատոմակայանի գործարկումը: Այդ ընթացքում ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունները վատթարացան, իսկ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը դադարեցվեց: Թեև որոշ հետազոտողներ կարծում են, որ Թուրքիայի շրջադարձը դեպի Արևմուտք դեռևս հնարավոր է, բայց, կարծես, հարաբերությունները հասել են այնպիսի մակարդակի, որ Մոսկվան կտրուկ ու ցավոտ կարծազանքի դրան: Իհարկե, նման քայլի սպառնալիքը մեկ անգամ չէ, որ կօգտագործվի Թուրքիայի կողմից, որպեսզի ստիպի Ռուսաստանին՝ «ըմբռնումով» վերաբերվելու որոշ մարտավարական քայլերի (օրինակ՝ քրդական հարցի պատճառով Սիրիա ներխուժումը, Ուկրաինայի հետ համագործակցությունը, այդ թվում՝ սպառազինության ոլորտում, և այլն): Սակայն Թուրքիայի ռազմավարական ծրագրերում արմատական փոփոխությունների հավանականությունը փոքր է, և դա կապված է նախագահ Թրամփի քաղաքականության կոնկրետ ասպեկտների հետ՝ նրա երկրորդ նախագահական ժամկետի ընթացքում:

2.8. Թեև 2009 թվականից ի վեր ԵՄ արտաքին քաղաքականության մեջ մեծացել է աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը, մասնավորապես, «Արևելյան գործընկերություն» (ԱլԳ) ծրագրի գործարկմամբ, էական հաջողություններ չեն արձանագրվել ոչ մի ուղղությամբ, ներառյալ հետխորհրդային երկրների ինտեգրումը: Պետք է հաշվի առնել նաև Թուրքիայի հետընթացը ԵՄ-ին անդամակցելու իր պարտավորությունների կատարման հարցում: Այսպիսով, կարելի

է փաստել, որ ԵՄ արտաքին քաղաքականության մեջ աշխարհաքաղաքական գործոնների ուժեղացումը չի ապահովել կազմակերպության դիրքերի ամրապնդում Եվրասիական կենտրոնում կամ տեսանելի հեռանկարներ «Արևելյան գործընկերության» շրջանակներում:

2.9. Եվրասիայից Եվրոպա բնական գազի փոխադրման երթուղիների և արտահանող երկրների կազմի բազմազանեցման նախագծերը, որոնց վրա ազդում են աշխարհաքաղաքական գործոնները, նույնպես ծախողվել են: Միջազգային հարաբերություններում արժեքների և նորմերի հիման վրա գործընկերների հետ հարաբերությունների կառուցման սկզբունքի ստվերում՝ հանուն աշխարհաքաղաքական գործոնի զգալի ամրապնդման, ԵՄ-ին որևէ էական հաջողություն չապահովեց: ԵՄ արտաքին քաղաքականության վերափոխման հետ կապված՝ կոշտ ավտորիտար և նույնիսկ տոտալիտար երկրների (Թուրքմենստան, Ադրբեյջան և այլն) նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը խաթարեց այդ արժեքներին կազմակերպության անվերապահ նվիրվածության հավատը, բայց չլուծեց էներգակիրների տեղափոխման խնդիրը: Զարմանալի է, որ ԵՄ ղեկավարությունը չունի տարրական պատկերացումներ աշխարհագրության և Եվրասիական կենտրոնում տիրող իրավիճակի մասին, ինչը հանգեցրեց երկու գազային գերնախագծերի՝ «Նաբուկոյի» և «Հարավային գազային միջանցքի» փլուզմանը:

2.10. Հարավային Կովկասի իրադարձությունները ցույց են տալիս, որ տեսանելի ապագայում էական փոփոխություններ չեն լինի: Թեև տարածաշրջանի երեք ճանաչված պետությունները ներառված են ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրում՝ հստակ աշխարհաքաղաքական կողմնորոշմամբ, սակայն հետխորհրդային տարածքում զարգացման տարբեր հետագծեր ունեն: ԵՄ-ն և ԱՄՆ-ը, շեշտը դնելով «գունավոր» հեղափոխությունների և կոռուպցիայի դեմ պայքարի վրա, աչք են փակում սահմանադրական նորմերի լուրջ խախտումների վրա: Համակարգային կառույցները, սկզբունքներն ու արժեքները (բազմակուսակցական համակարգ, սահմանադրականություն, պետական կառավարման համակարգի արդյունավետություն և դատական համակարգի իրական բարեփոխումներ և այլն) անտեսվում են, և նախապատվությունը տրվում են այնպիսի գործընթացների, որոնք կարևոր են, բայց մարել են համակարգային գործոնների ոլորտում էական առաջընթացի բացակայության պայմաններում: Արդյունքում Հարավային Կովկասում իրական ժողովրդավարացման գործընթացը և, հետևաբար, տարածաշրջանային մակարդակում զգալի աշխարհաքաղաքական փոփոխությունների հնարավորությունը ծախողվել են:

2.11. Խորհրդային Միության փլուզումից հետո Եվրասիական կենտրոնի երկու առավել ակտիվ տարածաշրջաններում՝ Հարավային Կովկասում ու Մերձավոր Արևելքում, իրադարձությունների զարգացման վրա ազդեց նոր աշխարհակարգի ձևավորման և տրանսպորտային ուղիների ու էներգետիկ ռեսուրսների հոսքերի

վերանայման անգիջում պայքարը: Դա մեծ ազդեցություն ունեցավ ռուս-թուրքական հարաբերությունների վրա, որոնք ավանդաբար բնութագրվում են մրցակցության և համագործակցության անսովոր համադրությամբ և փոխարկումներով: Դիտարկվող ժամանակահատվածում ռուս-թուրքական հարաբերությունները կարելի է բաժանել չորս փուլի: Առաջին փուլում, որը սկսվեց Խորհրդային Միության փլուզումից հետո և շարունակվեց մինչև 2007 թվականը, Անկարան ձգտում էր դառնալ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ամենաազդեցիկ օտարերկրյա խաղացողը: Սակայն դա չհաջողվեց, քանի որ Ռուսաստանը, հաղթահարելով իր ներքաղաքական խնդիրները, աստիճանաբար վերականգնեց իր ազդեցությունը: Երկրորդ փուլի սկիզբը 2008 թվականին Ռուսաստանի և Վրաստանի միջև հնգօրյա պատերազմն էր, որի հետ կապված իրադարձությունները բացահայտեցին Անկարայի կողմնորոշումը դեպի Մոսկվա: Մինչև 2015 թվականը տևած այս փուլում ռուս-թուրքական հարաբերությունները սրընթաց զարգանում էին՝ միջազգային հարաբերություններում երկու երկրների առջև ծառացած լուրջ բարդությունների և երկկողմ հարաբերություններում գայթակղիչ հեռանկարների պատճառով:

2.12. 2015 թվականին սիրիա-թուրքական սահմանի մոտ խոցված ռուսական ռազմական ինքնաթիռը՝ ԱՄԼ-ի և ԵՄ-ի կողմից ճնշումների հետևանքներն ու ռուսական ռազմաօդային ուժերի՝ Անկարայի համար անցանկալի գործողությունները չեզոքացնելու նպատակով, նշանավորեց երկրորդ փուլի ավարտը և ռուս-թուրքական հարաբերություններում ճգնաժամի սկիզբը: Թեև ճգնաժամը տևեց ընդամենը 7 ամիս, սակայն իր նշանակությամբ այն կարելի է համարել ռուս-թուրքական հարաբերությունների երրորդ փուլը:

2.13. Չորրորդ փուլի սկիզբը դրեցին 2016 թվականին ճգնաժամի հաղթահարումը և համագործակցության վերականգնումը՝ առաջին հերթին այն լուրջ դժվարությունների պատճառով, որոնց միջազգային հարաբերություններում բախվում էին Ռուսաստանն ու Թուրքիան՝ մեկուսացման զգալի նշանների դրսևորմամբ: Նոր աշխարհակարգում իր տեղը զբաղեցնելու համար Մոսկվան դեռ պետք է ապացուցեր, որ ունակ է հաղթահարելու տարբեր տարածաշրջաններում առկա մարտահրավերները՝ արևելաուկրաինական և Ղրիմի հակամարտությունները Սևծովյան տարածաշրջանում, սիրիական ճգնաժամը Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակը՝ Լեռնային Ղարաբաղում երկրորդ պատերազմից հետո:

2.14. Թուրքիայի իշխանությունները 2000-ականներին բախվեցին ներքաղաքական լուրջ դժվարությունների ու բազմավեկտոր (որոշ դեպքերում՝ իրար հակասող) մարտահրավերների (մասնավորապես, պետական հեղաշրջման փորձ, դրան հաջորդած բռնության մեծ ալիք, հակաժողովրդավարական սահմանադրական փոփոխություններ և այլն): Թվում է, թե կրկնվում է այն, ինչ տեղի ունեցավ մեկ դար առաջ, երբ նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում Ռուսաստանը և Թուրքիան, մերժված բոլորի կողմից, կարողացան դուրս գալ բարդ իրավիճակից՝

ապավինելով միմյանց, թեև, իհարկե, որոշ առումներով այդ իրավիճակները տարբերվում են:

2.15. Ինչպես Օսմանյան կայսրության և Ռուսական կայսրության փլուզումից հետո հարյուրամյա վաղեմության իրավիճակում, այնպես էլ երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո Թուրքիան միջազգային հարաբերություններում կիրառում է հավասարակշռման երկաստիճան ռազմավարություն: Բազմակողմ հարաբերությունների մակարդակում Անկարան փորձում է հավասարակշռել Ռուսաստանի և Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները՝ օգտագործելով նրանց փոխհարաբերությունները, և ժամանակ առ ժամանակ փոխելով կուրսը մերթ դեպի մեկ, մերթ դեպի մյուս ուղղությունը: Թուրքիան փորձում է ճշգրտել այդ բարդ խուսանավումները՝ բալանսավորելով երկկողմ մակարդակում (Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-ԱՄՆ): Ընդ որում, եթե Ռուսաստանի հետ օգտագործվում է համագործակցության/մրցակցության սխեման, ապա Միացյալ Նահանգների հետ՝ համագործակցության/առճակատման սխեմա:

2.16. Երկաստիճան հավասարակշռման ռազմավարությունը Թուրքիան կիրառում է ոչ թե որպես իրավիճակային լուծում՝ իմպուլսիվ արձագանք իրադարձությունների զարգացմանը, այլ որպես լավ մտածված ռազմավարություն, երբ անհրաժեշտ է լուծել բարդ աշխարհաքաղաքական խնդիրներ: Թուրքիան այդ ռազմավարությունն իրականացնում է ռազմական և քաղաքական բաղադրիչների համադրման միջոցով: Սրված աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում ռազմական բաղադրիչի՝ հարևան պետությունների դեմ ռազմական ագրեսիայի օգտագործումը թեև ռիսկային է, սակայն կարող է արդյունավետ լինել, քանի որ նման իրավիճակներում ազդեցիկ տերությունների համար ավելի դժվար է արագ արձագանքմամբ լուծել ռազմական ագրեսիայի դադարեցման խնդիրը: Սիրիայում («Եփրատի վահան», «Ձիթենու ճյուղ», «Խաղաղության աղբյուր», «Գարնանային վահան», «Ճանկի սուր») և Լեռնային Ղարաբաղում մի քանի նմանատիպ ռազմական ագրեսիաների շնորհիվ Թուրքիան կարողացավ զգալիորեն բարելավել իր դիրքերը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում, մեծապես չեզոքացնելով սիրիական քրդերի հավակնությունները՝ ուղղված ինքնավարության ձևավորմանն ու քուրդ բնակչության համախմբման հնարավորության օգտագործմանը:

2.17. Այդ իրադարձությունները ցույց տվեցին նաև սահմանափակ հնարավորություններ ունեցող կողմերի (մասնավորապես՝ քրդերի) կողմից ազդեցիկ տերությունների մարտավարական քայլերը (ԱՄՆ-ի նախապատվությունը քրդերին, այլ ոչ թե Թուրքիային) որպես ռազմավարական ընտրություն (սիրիական ճգնաժամում Թուրքիայի տարածաշրջանային դերի փոխարինումը քրդերի դերով) ընկալելու վտանգը: Թեև, իրենց ուսերին վերցնելով թուրքական ռազմական ագրեսիայի ծանր բեռն ու պատերազմի ավերիչ հետևանքները, Սիրիայի քրդերը սկզբնական շրջանում զգալի հաջողությունների հասան, սակայն, ի վերջո, չհասան իրենց նպատակներին:

2.18. Ռուսաստանի Օդատիեզերական ուժերի մասնակցությունը սիրիական ճգնաժամի կարգավորմանը հստակ ցույց տվեց, որ սուր աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում ազդեցիկ պետությունների դիրքորոշման փոփոխությունն էական ազդեցություն է ունենում իրադարձությունների ընթացքի վրա: Այդ գործոնն էական էր ոչ միայն գործընթացի զարգացման համար, այլև նախադրյալներ ստեղծեց քաղաքական բաղադրիչի՝ Աստանայի գործընթացի կարևորության մեծացման համար, որը վճռորոշ ազդեցություն ունեցավ թուրք-ամերիկյան հարաբերությունների որակական վերափոխման վրա: Սակայն չնախատեսված հանգամանքը՝ Հատուկ ռազմական գործողությունն Ուկրաինայում, արմատապես փոխեց իրավիճակը: Անկարան արագ օգտվեց Սիրիայից ռուսական զորքերի, ինչպես նաև ամերիկյան զորքերի զգալի մասի դուրսբերումից: «Իսլամական պետության» խմբավորումներից մեկը Թուրքիայի գլխավորությամբ կարողացավ տապալել Բաշար Ասադի կառավարությունը: Դա ոչ միայն ուժեղացրեց Թուրքիայի ազդեցությունը Սիրիայում, այլև առիթ դարձավ նախագահ Թրամփի հետ քննարկելու թուրք-ամերիկյան համագործակցության վերականգնման հնարավորությունները՝ օգտագործելով Թրամփի գովասանքը՝ ուղղված Էրդողանին, Սիրիայում իշխանափոխության գործում ունեցած դերակատարության վերաբերյալ:

III. Ինքնորոշման հակամարտությունների լուծումը աշխարհաքաղաքական տրանսֆորմացիայի համադրությամբ

3.1. Ռուսաստանի և Արևմուտքի միջև հետխորհրդային աշխարհաքաղաքական մրցակցության սրումը, որը նկատելի էր 2007-2008 թվականներից և շարունակվում է մինչ օրս, հասել է գագաթնակետին և վստահար ազդեցություն է ունենում ոչ միայն գլոբալ իրադարձությունների վրա, ինչպիսին է լիբերալ աշխարհի արմատական վերափոխումը, այլև տարածաշրջանային նշանակության շատ զգալուն գործընթացների վրա, որոնց թվում են հակամարտությունները և միջնորդական առաքելությունները: Դրա ամենավառ օրինակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացն է, որն արագորեն միջազգային իրավունքի արդյունավետ կիրառման օրինակելի դեպքից վերածվեց այդ նորմերի կոպիտ խախտման դեպքի:

3.2. Աղետների առաջին ալիքը տեղի ունեցավ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ կոպտորեն խախտելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները և, մասնավորապես, բանակցային փաստաթղթի առանցքային դրույթները, Ադրբեյջանի զինված ուժերը Թուրքիայի ռազմաօդային ուժերի և Սիրիայից տեղափոխված հազարավոր վարձկանների օգնությամբ, օգտագործելով արգելված զենք, իրականացրեցին լայնածավալ ագրեսիա Լեռնային Ղարաբաղի դեմ: Պատերազմի ընթացքում և դրանից հետո բազմաթիվ միջազգային կազմակերպությունների հաշվետվություններում և բանաձևերում, զանգվածային

լրատվամիջոցների հրապարակումներում բազմիցս հաստատվել են պատերազմական հանցագործությունների փաստերը: Մինսկի խմբի համանախագահները հայտարարել են, որ հակամարտությունը չի կարող լուծվել ռազմական ուժի միջոցով, ընդգծել են իրենց կարծիքն այն մասին, որ Մադրիդյան սկզբունքներն ու տարրերը պետք է հիմք հանդիսանան հակամարտության ցանկացած արդար և կայուն կարգավորման համար, և անհրաժեշտ է վերականգնել բանակցությունները Մինսկի խմբի ձևաչափով: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական հակամարտությունները խարխիւեցին այս ձևաչափը, ինչը հանգեցրեց նոր աղետալի իրադարձությունների:

3.3. Թեև 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ (Հայաստան, Ռուսաստան, Ադրբեջան) հայտարարությունը կարևոր էր պատերազմի դադարեցման տեսանկյունից, սակայն ինչպես այդ փաստաթղթի կարգավիճակը, այնպես էլ դրա դրույթները բավարար չէին բռնության հետագա էսկալացիան կանխելու, հակամարտությունը կարգավորելու և կայուն խաղաղություն հաստատելու և պահպանելու համար: Արևմուտքի քայլերը նույնպես անարդյունավետ են եղել՝ սահմանափակվելով հայտարարություններով, որոնք գործնական նշանակություն չունեին և չէին կարող նպաստել բռնի միջոցներով խնդիրը լուծելու փորձերի կանխմանը:

3.4. Իրադարձությունների նման զարգացման հավանականությունը մեծացավ նաև այն պատճառով, որ համանախագահ երկրները (Միացյալ Նահանգները, Ռուսաստանը և Ֆրանսիան), որոնք նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են, իրենց դիմակայությունը տեղափոխեցին Անվտանգության խորհուրդ: Արդյունքում այնտեղ չընդունվեց ոչ մի փաստաթուղթ, որը վերաբերեր 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիային, 2022 թվականին Հայաստանի դեմ ագրեսիային, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի շրջափակմանը:

3.5. Հեշտ է նկատել հզոր պետությունների մասնավոր շահերի ցինիկ նախապատվությունը միջազգային հարաբերություններում գլոբալ սկզբունքների նկատմամբ: Սա ոչ միայն խրախուսում է ռազմական ագրեսիան և ցեղասպանությունը կոնկրետ դեպքերում, այլև արժեզրկում է գլոբալ ինստիտուտները, սկզբունքներն ու նորմերը:

3.6. Չնայած այն հանգամանքին, որ ռուս խաղաղապահները տեղակայվել էին Լեռնային Ղարաբաղում, նրանք չէին վայելում հակամարտությունները լուծելու իրավասություն ունեցող որևէ միջազգային կազմակերպության հովանավորությունը: Խաղաղապահների կարգավիճակը և նրանց լիազորությունների շրջանակը փաստաթղթավորված չէին, ինչը նրանց տեղակայումն անարդյունավետ էր դարձրել: Այդ մասին է վկայում նրանց անգործությունը ադրբեջանական «բնապահպանների» կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև հաղորդակցությունների

շրջափակման ժամանակ, ինչպես նաև էթնիկ զտումների ժամանակ, որի արդյունքում Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչությունը՝ 120 000 մարդ, ստիպված է եղել որպես փախստական ապաստան գտնել Հայաստանում՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից վերսկսված ոմբակոծությունների պատճառով: Ակնհայտ է, որ առանց Լեռնային Ղարաբաղում ՄԱԿ-ի խաղաղապահների տեղակայման այդ մարդիկ չեն կարողանա վերադառնալ իրենց բնակության վայրեր:

3.7. Իրադարձությունների աղետալի զարգացումը կանխելու, հակամարտությունը կարգավորելու և կայուն խաղաղություն հաստատելու համար միջազգային հանրությունը պետք է ընտրություն կատարի ցեղասպանության խրախուսման և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ինքնորոշման իրավունքի կիրառման միջև՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տրամադրելով միջազգային իրավունքի գործիքակազմ ցեղասպանությունից պաշտպանվելու համար:

3.8. ՄԱԿ-ից բացի այլ միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ԵՄ և այլն) միջոցով խաղաղապահ առաքելությունների իրականացումը և ինքնորոշման հակամարտությունների կարգավորումը շատ ցածր արդյունավետություն ունի՝ այդ կազմակերպությունների գործիքակազմերի սահմանափակ լինելու պատճառով: Խնդիրն առանձնահատուկ նշանակություն ունի Եվրասիայի համար, որտեղ հակամարտությունների մեծ մասը ինքնորոշման բնույթ ունի: Ուստի, երբ հակամարտությունների կարգավորման գործընթացը հայտնվում է ճգնաժամային իրավիճակում, անհրաժեշտ է կիրառել ՄԱԿ-ի գործիքները:

3.9. Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ընթացքում, լարվածության աճին զուգընթաց, կտրուկ նվազում են հակամարտությունների խաղաղ կարգավորման և ռազմական գործողությունների կանխարգելման հնարավորությունները: Պատերազմների կանխարգելման և խաղաղության պահպանման ՄԱԿ-ի մեխանիզմները բավարար են կազմակերպության հիմնական առաքելությունն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, այդ մեխանիզմների արդյունավետ կիրառմանը հաճախ խոչընդոտում է ԱԽ մշտական անդամների վետոյի իրավունքի կիրառումը՝ նրանց շահերի բախման պատճառով, հատկապես նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլում:

3.10. Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների ժամանակ, մասնավորապես, նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլում, անհրաժեշտ է իրականացնել ակտիվ միջազգային վերահսկողական գործունեություն, հատկապես չկարգավորված հակամարտությունների նկատմամբ, ՄԱԿ-ի կանոնադրական նպատակներին հասնելու և հումանիտար աղետները կանխելու համար:

3.11. Արևելյան Թիմորի, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների կարգավորման գործընթացների հիմքում ընկած տրամաբանությունը լիովին համապատասխանում է ԽՍՀՄ փլուզման արդյունքում սկսված աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների դինամիկային: Երբ

ինքնորոշման ձգտող կողմի քաղաքական կարգավիճակի որոշման քայլերն իրականացվում են օպերատիվորեն և ավարտվում աշխարհաքաղաքական տրանսֆորմացիայի սկզբնական փուլում, գործընթացը հաջողությամբ ավարտվում է (Արևելյան Թիմորի օրինակը և ինքնորոշման ավելի քան տասը այլ օրինակներ): Երբ քայլերը դանդաղ են արվում, և գործընթացը տեղափոխվում է աշխարհաքաղաքական տրանսֆորմացիայի հաջորդ փուլ, այն սովորաբար չի ավարտվում (Կոսովոյի դեպք): Երբ գործընթացը սկսվում է միջանկյալ փուլում և տեղափոխվում է վերջնական փուլ, գործընթացը հետընթաց է ունենում, այն կարող է դեգրադացվել և նույնիսկ հանգեցնել հումանիտար աղետի (Լեռնային Ղարաբաղի դեպքը):

3.12. Նոր աշխարհակարգի ձևավորման համար ազդեցիկ պետությունների պայքարի ավարտական փուլում ռազմական ագրեսիային և ռազմական գործողություններին ՄԱԿ ԱԽ մշտական անդամների ոչ համարժեք արձագանքի տիպային օրինակ է Լեռնային Ղարաբաղի դեպքը: Իրավիճակը շտկելու և հումանիտար աղետը կանխելու միակ միջոցը ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելության հիմնումն է Լեռնային Ղարաբաղում՝ Մինսկի խմբի ձևաչափով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամների ներկայացուցիչների մշակած ծրագրի հիման վրա, ինչպես նաև 120 000 հայ փախստականների անվտանգ վերադարձի ապահովումը Լեռնային Ղարաբաղ՝ նրանց մշտական բնակության վայրեր:

3.13. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից խաղաղապահ առաքելությունների ձևավորման վերաբերյալ որոշումների ընդունումը գնահատելու համար նախատեսված Ուայթի և մյուսների առաջարկած եռաչափ մոդելը պետք է լրացվի չորրորդ չափումով՝ ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերի բախմամբ, որը մեծ նշանակություն ունի աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաների երկրորդ և երրորդ փուլերում:

3.14. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշ մշտական անդամների սուբյեկտիվ դիրքորոշումների հետ կապված հետագա ողբերգական հետևանքներից խուսափելու համար միջազգային իրավունքը պետք է կատարելագործվի՝ սահմանափակելով դրանց ազդեցությունը ընդունվող որոշումների վրա: Օրինակ, եթե իրավասու միջազգային ինստիտուտը ճանաչել է ինքնորոշման հռչակման համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին կամ հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը ինքնորոշման իրավունքի հիման վրա, իսկ մետրոպոլիան վերսկսում է ռազմական գործողությունները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը անհապաղ բանաձև պետք է ընդունի ռազմական գործողություններն անմիջապես դադարեցնելու, խաղաղապահ առաքելության ձևավորման, փախստականների վերադարձի և խաղաղ գործընթացով ինքնորոշման իրավունքի միջազգային իրացման ընթացակարգերի մեկնարկի մասին:

3.15. Միաբևեռ աշխարհի տեսական հիմքը Ս. Մաննի «Կառավարելի քառսի տեսությունն» է, որը մշակվել է 1990-ականների սկզբին՝ ԱՄՆ միջազգային հարաբերությունների արմատական վերանայման համար՝ մյուսների դեմ «կենսաբանական պատերազմ» վարելու նպատակով: Այս զենքի օգտագործման հիմնական ռազմավարությունն է փոխել «մարդկային ծրագրային ապահովման նպատակներն ու արժեքները»:

3.16. 1990-ական թվականների վերջից միջազգային հարաբերությունների զարգացումները հաստատում են, որ այս ոլորտում առկա են «կառավարելի քառսի» խորացման բազմաթիվ նշաններ՝ «գունավոր» հեղափոխություններ, ժողովրդավարացման գործընթացների օգտագործում՝ «անցանկալի» իշխանություններին խամաճիկներով փոխարինելու համար, միջազգային իրավունքի և համապատասխան ինստիտուտների անտեսում, պետությունների կողմից սահմանադրական և օրենսդրական նորմերի կոպիտ խախտումներ, հակամարտությունների «կարգավորման» ժամանակ մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների ակնհայտ կիրառում, այդ հանցագործությունների մեխանիզմների կիրառում հակամարտությունների «լուծման» համար և այլն:

3.17. Խորացող «կառավարելի քառսի» էսկալացիան և դրա հետևանքները ցույց են տալիս, որ միաբևեռ աշխարհակարգը հղի է չափազանց վտանգավոր մարտահրավերներով և աղետալի հետևանքներով ողջ մարդկության, այդ թվում՝ «կառավարելի քառսի» նախաձեռնողների համար: Այս պատրանքային գաղափարը գրավիչ է տգետ, ինքնասիրահարված գործարարների, պոպուլիստների, ծաղրածուների և տկարամիտ խամաճիկների համար, ովքեր հանգամանքների բերումով ավտորիտար պետություններում հայտնվում են իշխանության ղեկին ու ջանասիրաբար ոչնչացնում են կարգուկանոնը, արժեքները, սկզբունքներն ու օրենքը:

3.18. Ճանաչված (ՄԱԿ-ի անդամ) չլինելու հետևանքով առաջացած իրենց բնական խոցելիության պատճառով «կառավարելի քառսի» պարտադրումից ամենաշատը տուժել են նրանք, ովքեր գտնվում են ինքնորոշման գործընթացում: Միջազգային իրավունքը ծուղակ է դարձել այդ ժողովուրդների համար: Վառ օրինակ է Լեռնային Ղարաբաղի դեպքը: Ուստի, ինչպես այդ ժողովուրդների, այնպես էլ ողջ մարդկության համար կարևոր է վերականգնել միջազգային իրավունքի դերը և ամրապնդել համապատասխան ինստիտուտները միջազգային հարաբերություններում: Կարևոր է նաև օգտագործել համապատասխան գործիքներ՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները բացահայտելու, մեղավորներին պատժելու և տուժածների իրավունքները վերականգնելու համար:

*Գիրքը հրատարակվելուց հետո պարզ դարձավ, որ Թրամփը հրաժարվել է Գազայից պաղեստինցիներին տեղափոխելու մտքից և առաջարկում է Գազայի խնդրի լուծման 20 կետից բաղկացած նոր, շատ ավելի հրատեսական ու միջազգային իրավունքի սկզբունքներին չհակասող պլան: Այդուհանդերձ, դրա իրագործման համար պետք է անցնել երկար ու բարդ ճանապարհ և չի կարելի բացառել, որ, ինչպես նախկինում է եղել ոչ մեկ անգամ պաղեստինյան հակամարտության պարագայում, այս պլանը ևս կարող է ձախողվել այս կամ այն պատճառով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: